ՀՍՑՆԵԻ ՄՏՔԵՐԻՑ

Եղէք կատարելապէս համբերող կամ բնաւ անհամբերող, գնացէք կամ բարի և կամ չար ճանապարհով։ Իսկ անվճռական, երկչոտ կերպով մի քանի ճանապարհների վերայ կանգնելու համար դուք խիստ տկար էք։ Ո՛չ մի Հերքուլէս չէր կարող այդ անել և նա շուտով պէտք է ընտրէր իւր համար այս կամ այն ճանապարհը։

—

Մկրտութեան վկայականը Եւրոպական կուլտուրայի համար մուտքի տոմսակ է։

—

Ես տեսնում եմ անցեալի հրաշքները բոլորովին պարզ կերպով։ Մի վարագոյր է ձգուած ապագայի վերայ, բայց վարդագոյն. և նորա միջից դուրս են փայլում ոսկէ կոթողներ ու գոհարներ և քաղցրալուր ձայներ են հնչում։

—

Ամեն մի գիրք ժամանակ է պահանջում իւր աճման համար, որպէս ամեն մի երեխայ։ Արագ և մի քանի շաբաթների ընթացքում գրուած գրքերը իմ մէջ որոշ նախապաշարմունք են զարթեցնում հեղինակի դէմ, ազնիւ կինը երեխայ է ծնում ինն ամսուայ լրջութիւնից յետոյ, բայց ոչ աւաջ։

—

Աշխարհի մեծութիւնը միշտ համապատասխանում է ոգու մեծութեան, որ դիտում է այն (աշխարհը)։ Բարի մարդը այստեղ, երկրիս վերայ, գտնում է իւր դրախտը, իսկ չար մարդը արդէն այստեղ վայելում է իւր դժոխքը։

—

Ժողովրդի յորձանքը ալեկոծ ծովի է նման. նորա վերայ անցնող ամպերը նորան միայն գոյն են տալիս և ճերմակ ալիքներ (Միւլլէր և Բրաուէր) նրանց մէջ են լողում—գրողները իրանց խօսքով ներկում, գոյն են տալիս գոյութիւն ունեցող խառվեալ, ապստամբ տարրերին։

—

Հին առակը երեք եղբայրների մասին իրականանում է։ Մէկը հարիւր մղոն է վազում մի քանի ժամերի ընթացքում, միւսը հարիւր մղոն առաջ, հեռու է տեսնում, երրորդը նոյնպէս հեռու արձակում է (թնդանօթ), չորրորդը փչելով զորքեր է ջնջում—երկաթուղի, հեռադիտակ, թնդանօթներ, վառօդ կամ մամուլ։

—

Շունը, որին բերանկապ են հագցնում, հաչում է իւր լեռոլքով։ Ծուռ, ոլոր մոլոր մտածողութիւնը աւելի գէշ հոտով է արտայայտւում, արտայայտութեան կեղծութեան միջոցով։

Գերմ. բարգմ. Ա. ԵԴԻԳԱՐ.